ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-20-9/23-1»

ք. Երևան 10.01.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունն ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե.Սարգսյանի, որը գործում է «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **34 649 560 /երեսունչորս միլիոն վեց հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, ընդ որում «Էազեթ Ֆարմա» ՍՊԸ-ն թիվ 4-6, 16-20 և 22-րդ չափաբաժինների մասով վճարում է 1 055 150 /մեկ միլիոն հիսունհինգ հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՈԲ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Տիգրան Մեծի 63/23
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011006492	Հ/Հ 1930000521940100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00433863
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
10 .01.2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/23-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի												
Հ/հ	CPV	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*	
1	33141193/562	Տուրբինային գչիրներ Coltene Whaledent	Coltene Whaledent	Բորեր ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Ալմաստե հատիկները համասեռ են և հավասարաչափ, խոշորությունը՝ 20-150մ: Յուրաքանչյուր խմբաքանակ անցնում է կարծրության լազերային թեստավորում: Ծագման Հավաստագիր՝ խմբաքանակներով:	հատ	1020	2040000	2000	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	2000		
2	33141193/627	Պլոմբը հարթեցնելու ռետին Kerr	Kerr	Անկյունային ծայրակալի համար պլոմբը հարթեցնելու ռետինե ծայրակալներ , առանց լատեքսի, ռետինե մասը ունենա թեքված գալարներ, որը հնարավորություն է տալիս ռետինե մասի հովացում, ինչպես նաև սեղմվելով ատամներին թույլ չի տալիս օգտագործվող մածուկի տարածումը բերանի խոռոչում: Գործարանային փաթեթավորմամբ	հատ	299	2152800	7200	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	7200		
3	33141193/628	Ատամնաբուժական ասեղներ Tecnofar	Tecnofar	Ատամնաբուժական ասեղներ 30G-25mm, 30G-16mm, 27G-36mm, ախտահանված ռադիացիոն մեթոդով ISO 7885- 2001, EN 556-1, ISO 11137, պատրաստված AISI 304 - 1.4301 պողպատից, կազմը՝ C ≤0,07, Si ≤1,00, Mn ≤2,00, N ≤0,11, Cr 17,5-19,5, Ni 8,0-10,5: Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	27	810000	30000	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	30000		
4	33141193/629	Ալգինատ Zhermack	Zhermack	Ալգինատային չափանյութ արտադրության, 453gr, ստվարաթղթե վակուումային փաթեթա-վորմամբ, 5 օր ստաբիլությամբ, մրգային համով, մանուշակագույն փոշի, բերանում գտնվելու ժամանակը 45 վայրկյան: Շաղախման ժամանակը՝ 30 վայրկյան: Ընդհանուր ժամանակ 1 րոպե 50 վրկ.: ISO 1563/ADA 18	հատ	2904	145200	50	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	50		
5	33141193/631	Դամի ռեզին Coltene Whaledent	Coltene Whaledent	Ատամն. ռաբբեր դամի թաշկինակ, կանաչ գույնի, մենթոլի համով, 6x6: Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	210	151200	720	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	720		
6	33141193/635	Թղթե գամիկներ Pearl Dent	Pearl Dent	Թղթե շտիֆտ միլիմետրային սանդղակով, 200 հատ :asorti	հատ	5,28	950400	180000	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	180000		
7	33141193/636	Գուտապերչե գամիկներ Pearl Dent	Pearl Dent	Գուտ. շտիֆտ ISO 02 04 և 06 կոնայնությամբ, միլիմետրային սանդղակով,: 0,29ml Iso.06 N15, N20, N25, N30, N35:	հատ	21	88200	4200	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական	4200		

				Գործարանային փաթեթավորմամբ:					դեղաբազա		
8	33141193/638	Բոնդ Kerr	Kerr	opti bond solo plus 5 մլ շշով, էթանոլի հիմքով, 15 տոկոս ծավալով բաղկացած է ոչօրգանական բարիումական լցիչից 0.4 միկրոն մասնիկների չափով	հատ	26900	1076000	40	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	40	
9	33141222/536	Պլոմբանյութ լուսակարծրացող Kerr	Kerr	XRV HERCULITE 78gr KERR: Հիբրիդային պլոմբանյութ - 78 գր. տարայով, պարունակում է 16 ներարկիչ դենտինային 5 գր A2, B1, C2, D2, էմալային 5գր A1, A2, A3, A3,5 , B1, B3, C2, C3, D2, D3 և կտրիչային 2,5 գր մեդիում, լայթ պլոմբա, օրթոֆոսֆորական թթու 3 գր, ապլիկատորներ 50 հատ, բոնդ 5 մլ. Պլոմբանյութը 76 տոկոսով (57 տոկոս) ծավալով բաղկացած է ոչ օրգանական բարիումական լցիչից 0.6 միկրոն մասնիկների չափով	լրակազմ	196000	2940000	15	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	15	
10	33141222/538	Քիմիական կարծրացման ցեմենտ GC EUROPE	GC EUROPE	35գ փոշի 25գր հեղուկ, ռենտգեն-կոնտրաստային ապակեիոնոմերային ֆիքսող ցեմենտ, գույնը բաց դեղին, արտազատում է ֆտոր, ֆիքսացիոն ուժը 4 մթնոլորտ, շաղախման ժամանակը՝ 20 վայրկյան, աշխատանքային ժամանակը՝ 2 րոպե: Տուփը պարունակում է 3 լրակազմ:	լրակազմ	43000	1290000	30	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	30	
11	33141193/639	Հեղուկ պլոմբանյութ Coltene Whaledent	Coltene Whaledent	Նանոքոմպոզիտային պլոմբանյութը 84 տոկոս քաշով բաղկացած է ոչ օրգանական բարիումական լցիչից 0.02 միկրոն մասնիկների չափով, 2,3գ ծավալով	հատ	11900	476000	40	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	40	
12	33141193/640	Մատրիցա Kerr	Kerr	Էկվատորային մատրիցաններ, հաստությունը 0,038մմ և 0,05մմ հաստությամբ, Գործարանային փաթեթավորմամբ տուփով,	հատ	74	139860	1890	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	1890	
13	33141193/641	Սեպ Kerr	Kerr	փայտե սեպեր տուփի մեջ՝ նարնջագույն, կանաչ, դեղին, փիրուզագույն, բաց վարդագույն, սպիտակ կաթնագույն չափսերի և գույների ընտրության հնարավորությամբ Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	59	401200	6800	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	6800	
14	33141222/539	Արմատալիցք Produits Dentaires	Produits Dentaires	Կոմպլեկտ՝ փոշի-endofill-15gr, բաղադրությունը՝դեքսամեթազոնի ացետատ, հիդրոկորտիզոնի ացետատ, պոլիօքսիմեթիլեն, թիմոլի յոդիդ, հեղուկ - 15ml, էվգենոլ	լրակազմ	19800	990000	50	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	50	
15	33141193/642	Կալցի հիդրոքսիդ Produits Dentaires	Produits Dentaires	Ռադիոպակ կալցիումի հիդրոքսիդի մածուկ – 3 մլ քաշով, ներարկիչի տուփով	հատ	8900	356000	40	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	40	
16	33141222/540	Սիլիկոն Elite HD+ putti soft normal setting կամ համարժեք Zhermack	Zhermack	Elite HD+ putti soft normal setting կ, չափսանյութ՝ Ա-դասի, առաջին շերտ 1800 մլ, 4 տարրա 450 մլ, պոլիվինիլսիլոքսանի հիմքով, գույնը՝ նարնջագույն, մշակման ընդանուր ժամանակը՝ 2 րոպե, բերանում գտնվելը՝ 3 րոպե 30 վայրկյան, պնդեցման	լրակազմ	69000	690000	10	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	10	

				ժամանակը՝ 5 րոպե 30 վայրկյան, պնդուցյուն Շորով՝ 60, առաձգական վերականգնում՝ ավել քան 99,5%. չափսերի ստաբիլություն՝ պակաս քան -0,20%							
17	33141222/541	Սիլիկոն Elite HD+ super light body fast set կամ համարժեք Zhermack	Zhermack	Elite HD+ super light body fast set, չափսանյութ՝ Ա-դասի, երկրորդ շերտ 100 մլ, 2 քարտրիջ 50 մլ, պոլիվինիլսիլոքսանի հիմքով, գույնը՝ մանուշակագույն, մշակման ընդանուր ժամանակը՝ 1 րոպե 30 վայրկյան, բերանում գտնվելը՝ 2 րոպե 30 վայրկյան, պնդեցման ժամանակը՝ 4 ռոպե, պնդուցյուն Շորով՝ 45, առաձգական վերականգնում՝ ավել քան 99,5%. չափսերի ստաբիլություն՝ պակաս քան-0,20%	լրակազմ	15600	312000	20	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	20	
18	33141193/647	Պլոմբը փայլեցնող մածուկ Kerr	Kerr	2գ. Փաթեթավորմամբ, միանգամյա օգտագործման մածուկներ, պլոմբանյութի մաքրման և փայլեցման համր	հատ	150	300000	2000	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	2000	
19	33141193/648	Ռետրակցիոն թել Pascal	Pascal	Ռետրակցիոն հյուսած բամբակյա թել SILTRAX Plus, 72 ինչ/183 սմ, երկարությամբ, թաթախված ռացեմիկ էպինեֆրինի հիդրոքլորիդով, 0.089մգ/սմ և ցինկի ֆենոսուլֆոնատով 0.157 մգ/սմ: Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	3948	3158400	800	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	800	
20	33141193/649	Թերմոպլաստիկ չափսանյութ (ստենս) Kerr	Kerr	Impression compound green – կծվացքի որոշման նյութ, փայտիկի տեսքով,113 գր, աշխատանքային ջերմաստիճանը 50-51C: Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	660	148500	225	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	225	
21	33141222/542	Ժամանակավոր ցեմենտ Kerr	Kerr	Ժամանակավոր ցեմենտ էվգենոլ չպարունակող, ժամանակավոր շապիկների և կամուրջների ամրացման համար, լրակազմը պարունակում է 50գ բազա և 15գ ակտիվատոր:	լրակազմ	14500	87000	6	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	6	
22	33141193/650	Թքածծիչ Super Dent	Super Dent	Թքածծիչ, բազմագույն: Գործարանային փաթեթավորմամբ:	հատ	11,88	475200	40000	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	40000	
23	33131160/503	Տուրբինային ծայրակալներ NSK	NSK	M4 ելանցքով, հավաքծուն պարունակում է ուղիղ և թեք ծայրակալներ և միկրոմոտոր, ուղիղ ծայրակալը պետք է նախատեսված լինի 2,35մմ HP բորերի համար և ունենա 40000 պտույտ/րոպե, թեք ծայրակալը՝ 2,35 մմ CA բորերի համար, մինչև 40000 պտույտ/րոպե, միկրոմոտորը 88գ քաշով, չափը 40,8մմ, 22000 պտույտ/ռոպե	հատ	98000	1470000	15	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	15	
24	33141223/517	Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով NSK	NSK	Մետաղի դասակարգում՝ AISI 420, UNI X30 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 12-14%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 50-58 HRC, սահմանային կարծրություն 66-77 կգ/մմ²: որը իր մեջ ներառում է ատամնաքուժական	լրակազմ	228000	2736000	12	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	12	

				նրբունելի, ատամնաբուժական հայելի իր բռնակով, ատամնաբուժական երկկողմանի զոնդ, ատամնաբուժական մածկիչ, շաղափիչ, ատամնաբուժական հարթիչ, ատամնաբուժական սեղմիչ, ատամնաբուժական է նդոդոնտիկ երկկողմանի զոնդ: Գործիքները պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն							
25	33141223/518	Ատամնաբուժական գործիքների հավաքածու Dentag	Dentag	Պարունակում է մատրիցապահիչ ունիվերսալ և 12 հատ մատրիցա: Մետաղի դասակարգում՝ AISI 304, UNI X5 Cr Ni 1810, բաղադրություն՝ չժանգոտվող պողպատ, ածխածին 0.6%, մանգան 2%, սիլիցիում 1%, քրոմ 10-20%, նիկել 8-12%: Էլաստիկություն՝ 19.687կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 35- 45 HRC, սահմանային կարծրություն 70-126 կգ/մմ²: Օգտագործվում է 0,05մմ և 0,035մմ մատրիցաների համար:	լրակազմ	89000	1780000	20	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	20	
26	33141222/544	Կաղապարաբռնիչ Dentag	Dentag	Ռաբեր դամի գործիքների լրակ. Լր. ներառում է՝ ռաբեր դամի դակիչ Ivory 160մմ, կլամպի աքցան Brewer 175մմ, ռաբեր դամի գերամուր շրջանակ ախտահանվող, կլամպերի պատվանդան՝ իր կլամպաներով 9 հատ: Մետաղի դասակարգում՝ AISI 410, UNI X12 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%,մսիլիցիում 1%, քրոմ 11.5-13.5%: Էլաստիկություն՝ 20.39 կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45- 55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²: Պարունակում է ռաբերդամի թաշկինակ 6x6 152x152 չափի 36 հատ, դակման ֆիքսատոր, ֆլոս 2մ	լրակազմ	14800	296000	20	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	20	
27	33141222/545	Ռաբեր դամի համակարգ Coltene Whaledent	Coltene Whaledent	Մետաղի դասակարգում՝ AISI 420, UNI X30 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 12-14%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 50-58 HRC, սահմանային կարծրություն 66-77 կգ/մմ²:որը իր մեջ ներառում է ատամնաբուժական նրբունելի, ատամնաբուժական հայելի իր բռնակով, ատամնաբուժական երկկողմանի զոնդ, ատամնաբուժական մածկիչ, շաղափիչ, ատամնաբուժական հարթիչ, ատամնաբուժական սեղմիչ, ատամնաբուժական էնդոդոնտիկ երկկողմանի զոնդ: Գործիքները պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն	լրակազմ	174000	2088000	12	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	12	
28	33141223/519	Մետաղական գդալներ հավաքածու Dentag	Dentag	Ներփակերտման պողպատե գդալների լրակ. ռետենցված եզրերով, անատոմիական, N10: Մետաղի դասակարգում՝ AISI 304, UNI X5 Cr Ni 1810, բաղադրություն՝ պողպատ, մանգան	լրակազմ	39000	468000	12	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	12	

				2%, ածխածին 0.6%, սիլիցիում 1%, քրոմ 10-20%, նիկել 8-12%: Էլաստիկություն՝ 9.687կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 35-45 HRC, սահմանային կարծրություն 70-126 կգ/մմ²:							
29	33141223/520	Ատամնաբուժական աքցանների կոմպլեկտ Dentag	Dentag	Ատամնաբուժական աքցանների լրակ: Լրակ. ներառում է 12 աքցան՝ վերևի կենտրոնական ատամների և ժանիքների համար, ներքևի պրեմոլյարների համար, ներքևի արմատների համար, վերևի արմատների համար, վերևի պրեմոլյարների, ներքևի մոլյարների համար, վերևի աջ մոլյարների համար, վերևի ձախ մոլյարների համար, վերևի 8-րդ ատամների համար, ներքևի 8-րդ ատամների համար, ներքևի կտրիչների համար, ներքևի կոտրված մոլյարների համար: Մետաղի դասակարգում՝ AISI 410, UNI X12 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 11.5-13.5%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45-55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²: Գործիքները պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն	լրակազմ	287000	3444000	12	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	12	
30	33141223/521	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու Dentag	Dentag	Սինդեսմոտոմ լրակազմ, Լր. ներառում է 1 բռնակ 20 ծայրակալ: Մետաղի դասակարգում՝ AISI 420, UNI X30 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 12-14%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ²,կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 50- 58 HRC, սահմանային կարծրություն 66-77 կգ/մմ²:	լրակազմ	218000	1744000	8	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	8	
31	33141222/546	Ատամնաբուժական քարթրիջի ներարկիչ Dentag	Dentag	Ատամնաբուժական քարթրիջի ներարկիչ: 2 փոփոխական գլխիկներով նախաբեսված ամերիկյան և եվրոպական ստանդարտ ներարկիչների համար: Մետաղի դասակարգում՝ AISI 304, UNI X5 Cr Ni 1810, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.6%, մանգան 2%, սիլիցիում 1%, քրոմ 10-20%, նիկել 8-12%: Էլաստիկություն՝ 9.687կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 35-45 HRC, սահմանային կարծրություն 70-126 կգ/մմ²:	լրակազմ	3800	95000	25	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	25	
32	33131110/509	Կյուրետաժի գդալ երկկողմանի Dentag	Dentag	Կյուրետաժի գդալ երկկողմանի: Մետաղի դասակարգում՝ AISI 410, UNI X12 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 11.5-13.5%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45-55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²: Գունային տարբերակումով:	հատ	8800	52800	6	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	6	
33	33141193/654	Ռետրակցիոն թելի գործիք Dentag	Dentag	Ռետրակցիոն թելի գործիք կլոր ատամնավոր ծայրերով: Մետաղի դասակարգում՝ AISI 410, UNI X12 Cr13, բաղադրություն՝ պողպատ	հատ	16800	100800	6	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական	6	

				ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 11.5-13.5%: Էլաստիկություն՝ 20.39 կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45-55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²:					դեղաբազա		
34	33141193/655	Ատամնաբուժական ալյումինե տեփուր Dentag	Dentag	Ատամն. ալյումինե տեփուր, ուղղանկյունաձև, տարբեր գույների: Պետք է ունենա բազմակի ախտահանման հնարավորություն	հատ	8900	267000	30	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	30	
35	33141193/656	Էնդոդոնտիկ քանոն Guilin Woodpecker	Guilin Woodpecker	Մետաղական, նախատեսված մատի համար, յուրաքանչյուր չափման միավորի երկարությունը 0.5մմ	հատ	15000	450000	30	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	30	
36	33141222/548	Ձեռքի սկելետների հավաքածու Dentag	Dentag	Գրայսի սկելետների հավաքածու: Գունային տարբերակումով:	լրակազմ	120000	480000	4	ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	4	

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:

3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:

****թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ***

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

****Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էազեթ Ֆարմա» ՍՊԸ
Տնօրեն

Ե.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N
1 0 .01.2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/23-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հ/հ	CPV	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33141193/562	Տուրբինային գչիրներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	33141193/627	Պլոմբը հարթեցնելու ռետին	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3	33141193/628	Ատամնաբուժական ասեղներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
4	33141193/629	Ալգինատ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
5	33141193/631	Դամի ռեզին	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
6	33141193/635	Թղթե գամիկներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
7	33141193/636	Գուտապերչե գամիկներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
8	33141193/638	Բոնդ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
9	33141222/536	Պլոմբանյութ լուսակարծրացող	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
10	33141222/538	Քիմիական կարծրացման ցեմենտ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
11	33141193/639	Հեղուկ պլոմբանյութ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
12	33141193/640	Մատրիցա	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
13	33141193/641	Սեպ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
14	33141222/539	Արմատալիցք	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
15	33141193/642	Կալցի հիդրոքսիդ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
16	33141222/540	Սիլիկոն Elite HD+ putti soft normal setting կամ համարժեք	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
17	33141222/541	Սիլիկոն Elite HD+ super light body fast set կամ համարժեք	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
18	33141193/647	Պլոմբը փայլեցնող մածուկ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
19	33141193/648	Ռետրակցիոն թել	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

20	33141193/649	Թերմոպլաստիկ չափանոյութ (ստենս)	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
21	33141222/542	Ժամանակավոր ցեմենտ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
22	33141193/650	Թքածծիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
23	33131160/503	Տուրբինային ծայրակալներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
24	33141223/517	Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
25	33141223/518	Ատամնաբուժական գործիքների հավաքաժու	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
26	33141222/544	Կաղապարաբռնիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
27	33141222/545	Ռաբեր դամի համակարգ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
28	33141223/519	Մետաղական գդալներ հավաքածու	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
29	33141223/520	Ատամնաբուժական աքցանների կոմպլեկտ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
30	33141223/521	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
31	33141222/546	Ատամնաբուժական քարթրիջի ներարկիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
32	33131110/509	Կյուրետաժի գդալ երկկողմանի	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
33	33141193/654	Ռետրակցիոն թելի գործիք	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
34	33141193/655	Ատամնաբուժական ալյումինե տեփուր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
35	33141193/656	Էնդոդոնտիկ քանոն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
36	33141222/548	Ձեռքի սկելետների հավաքածու	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էսգեթ Ֆարմա» ՍՊԸ
Տնօրեն

Ե.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
10 .01.2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/23-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
10.01.2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/23-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն